ԲՅՈՒԼԵՏԵՆ

Հունվար 2026թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Հունվարին գումարվել է Պալատի խորհրդի 1(մեկ) նիստ՝ **22.01.2026թ.-ին**: Նիստի օրակարգում ընդգրկված էր 3 հարց: Նիստի ընթացքում հաստատվեցին Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորում շնորհելու, Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունելու, Պալատի աուդիտորի որակավորման դիմումը մերժելու մասին որոշումները:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողով

Որակավորման հանձնաժողովը գումարել է 1(մեկ) նիստ՝ **15.01.2026թ.-ին,** որում աուդիտորի որակավորում է շնորհվել 2(երկու) անձի և մերժվել է աուդիտորի որակավորում տալ մեկ անձի

Անդամակցության հանձնաժողով

Հանձնաժողովը գումարել է 1(մեկ) նիստ՝ **16.01.2026թ.-ին**, որում որոշել է առաջարկել Պալատի խորհրդին՝ հաստատելու 4(չորս) ֆիզիկական անձանց անդամակցությունը Պալատին:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

12.01.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Առողջության համընդհանուր ապահովագրության մասին նոր օրենքի և դրան առնչվող օրենքների փոփոխությունները» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Անուշ Միքայելյանը:**



19.01.2026թ.-ին տեղի է ունեցել ՇՄԶ-«Աշխատանքային օրենսգրքի ամենակիրառելի կարգավորումները. հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր **Ժորա Սարգսյանը:**



2026Թ. ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Հունվարի 26-ին Որակավորման ծրագրի 7-րդ՝ **«Աուդիտ և հավաստիացում»** առարկայի քննությամբ մեկնարկեց Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի որակավորման ծրագրի 2026թ. ձմեռային քննաշրջանը: